ՄԱՍ III

ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ

ՀՀ համախմբված բյուջե

2009 թվականի ֆինանսա-տնտեսական ճգնաժամից հետո դիտարկվում է ՀՀ համախմբված բյուջեի ցուցանիշների բարելավում, որի մասին վկայում են ստորև բերված աղյուսակում ներկայացված 2010-2014 թվականների փաստացի ցուցանիշները.

(մլրդ դրամներով)

	2010 փաստացի	2011 փաստացի	2012 փաստացի	2013 փաստացի	2014 փաստացի
Եկամուտներ	804.3	906.1	975.3	1.101.7	1,178,2
Ծախսեր	975.9	1,013.5	1,037.1	1,170.5	1,268.8
Դեֆիցիտ	171.6	107.4	61.8	68.8	90,6

«Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագծով ՀՀ 2016 թվականի համախմբված բյուջեն կանխատեսվում է՝ եկամուտների գծով՝ 1,222.8 մլրդ դրամ (առանց միջբյուջետային փոխանցումներից ստացվող մուտքերի), ծախսերի գծով՝ 1,415.1 մլրդ դրամ (առանց միջբյուջետային փոխանցումների) և դեֆիցիտը՝ 192.3 մլրդ դրամ:

Հայաստանի Հանրապետության համայնքների 2016 թվականի բյուջեների ծավալը խիստ նախնական գնահատվել է՝ եկամուտների գծով՝ 130.7 մլրդ դրամ (ներառյալ՝ պետական բյուջե-ից ստացվող հատկացումները), ծախսերի գծով՝ 132.3 մլրդ դրամ և դեֆիցիտը՝ 1.6 մլրդ դրամ:

Հարկ է նշել, որ ՀՀ համախմբված բյուջեի ցուցանիշների նման աճը պայմանավորված է ոչ միայն պետական բյուջեի ցուցանիշների շարունակական բարելավմամբ, այլև արտա-հայտում է համայնքների բուջեների եկամուտների հավաքագրման մակարդակի բարձրացման

կայուն միտումները և դրա շնորհիվ ծախսերի ծավալների ավելացումը: Համայնքների բյուջեների սեփական եկամուտների (առանց պետական բյուջեից ստացված պաշտոնական դրամաշնորհների և պետության կողմից համայնքների ղեկավարներին պատվիրակված լիազորությունների ֆինանսավորման համար ստացվելիք հատկացումների) փաստացի հավաքագրած ծավալների աճի 2010-2014 թվականների դինամիկան ներկայացված է ստորև բերված աղյուսակում.

(մլրդ դրամներով)

2010 փաստացի	2011 փաստացի	2012 փաստացի	2013 փաստացի	2014 փաստացի
23.2	25.2	28.9	30.4	33.2

<u>ՀՀ պետական բյուջե</u>

«Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագծով առաջարկվում է ՀՀ 2016 թվականի պետական բյուջեն հաստատել՝ եկամուտների գծով՝ 1,186.3 մլրդ դրամ, ծախսերի գծով՝ 1,377.0 մլրդ դրամ, իսկ դեֆիցիտը՝ 190.7 մլրդ դրամ:

ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվող դեֆիցիտի գումարը ՀՀ 2015 թվականի պետական բյուջեով հաստատված և ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի կատարման արդյունքներով փաստացի ձևավորված ցուցանիշների նկատմամբ նախատեսված է համապատասխանաբար՝ 76.6 մլրդ դրամ և 97.5 մլրդ դրամ ավելացումով: ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծի դեֆիցիտի և 2016 թվականի համար ծրագրվող անվանական ՀՆԱ-ի հարաբերությունը կանխատեսվում է 3.5 %-ի չափով, ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվող դեֆիցիտի ֆինանսավորման համար ծրագրավորված վարկերի զգալի մասը կտրամադրվի Համաշխարհային բանկի կողմից (ներգրավվող վարկերի տրամադրման ժամկետների և տոկոսադրույքների մասին տվյալները ներկայացված են սույն բացատրագրի N 1 հավելվածում և N 18 աղյուսակում):